ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Կարգավիճակ	Առաջարկության բովանդակությունը	Կցված փաստաթղթեր	Եզրակացություն	Դրույթ
	1	2	3	4	5	6
1	«Ա.Դ.ՍԱԽԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ 06.11.2026 18:54:44		Սույն նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով, 2-րդ հոդվածի 1-ին մասով, 4-րդ հոդվածի 1-ին մասով, 7-րդ հոդվածի 1-ին մասով և 9-րդ հոդվածի 7-րդ մասով առաջարկվում է համապատասխանաբար «Պետական նպաստների մասին» օրենքի 24-րդ, 24.1-ին, 26.1-ին, 28.3-րդ և 28.5-րդ հոդվածներից հանել որդեգրողին վերաբերող բառերը: Առաջարկվող փոփոխությունները		**Առաջարկն ընդունվել է ի գիտություն:** Ընդունելի է այն դիտարկումը, որ որդեգրողն ու որդեգրված երեխան իրավունքներով և պարտականություններով հավասարեցված են ծագումով ազգականներին: Նշվածը հիմք ընդունելով՝ նախագծով առաջարկվում է համապատասխան փոփոխությունները, ըստ որի որդեգրման	

			կարող են հանգեցնել նրան, որ որդեգրողը համապատասխան նպաստների կարգավորման մեջ այլևս ուղղակիորեն չհիշատակվի, թեև որդեգրման հետևանքով առաջանում են ծնող-երեխա իրավահարաբերությունն երը: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 126-րդ հոդվածով որդեգրված երեխաները և որդեգրողները անձնական ոչ գույքային ու գույքային իրավունքներով և պարտականություններով հավասարեցվում են ծագումով ազգականներին: Հետևաբար, եթե համապատասխան դրույթներից որդեգրողին հանելու նպատակը չի բխում տվյալ նպաստի		հետևանքով որդեգրողը դառնում է երեխայի ծնող, ուստի Օրենքում առկա «ծնող» եզրույթը ներառում է նաև նրան, և առանձին հիշատակումը ավելորդ է ու կարող է ստեղծել տպավորություն, թե որդեգրողը ծնողից տարբերվող կարգավիճակ ունի: Նախագծի նպատակը որդեգրողներին շահառուների շրջանակից հանելը չէ, նրանց իրավունքները պահպանվում են: Նույն տրամաբանությամբ վերանայվում են նաև երեխայի որդեգրվելու դեպքում նպաստի իրավունքը կորցնելուն վերաբերող	

			բնույթից կամ հատուկ կարգավորումից, անհրաժեշտ է հիմնավորել, թե ինչու է որդեգրողը տարբերակվում կենսաբանական ծնողից: Նախագծի հիմնավորումից պետք է պարզ լինի փոփոխությունը նպատակ ունի բացառել որդեգրողներին նպաստի շահառուների շրջանակից, թե՞ պարզապես վերացնել կրկնվող կամ տեխնիկական ձևակերպումները: Եթե նպատակը տեխնիկական է, ապա պետք է ապահովել, որ որդեգրողի իրավունքը պահպանվի օրենքի այլ հստակ դրույթով: **Առաջարկում ենք չհանել որդեգրողին վերաբերող**		կարգավորումները: Ելնելով նշվածից, ընդհանուր կանոնի ավելացումը անհրաժեշտ չենք համարում, իսկ հիմնավորումը լրամշակվել է վերոնշյալի տրամաբանությամբ:	

			բառերը, եթե նախագծի հիմնավորմամբ չի ներկայացվում այդ տարբերակման հստակ իրավական պատճառը: Եթե օրենսդրի նպատակը որդեգրողին ծնողի հետ հավասար կարգավիճակով դիտարկելն է, կարելի է նախատեսել ընդհանուր կանոն՝ *«Սույն օրենքի իմաստով ծնող է համարվում նաև որդեգրողը, եթե սույն օրենքով կվյալ նպաստի կամ իրավահարաբերության համար այլ բան նախատեսված չէ»:*			
2	«Ա.Դ.ՍԱԽԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ		Սույն նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասով, 8-րդ հոդվածի 7-րդ մասով և 9-րդ հոդվածի 3-րդ մասով առաջարկվում են փոփոխություններ «Պետական նպաստների մասին» օրենքի 26.3-րդ,		**Առաջարկն ընդունվել է ի գիտություն:** Նախագծով առաջարկվող տարբեր նպաստների նշանակման և վճարման գործընթացներում	

	ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ 06.11.2026 18:54:44		28.4-րդ և 28.5-րդ հոդվածներում՝ որոշ դեպքերում 6 կամ 12 ամսվա ժամկետները փոխարինելով 3 ամսով: Երեք ամսվա շեմի սահմանումը կարող է խստացնել նպաստի իրավունքի պահպանման կամ դադարեցման պայմանները: Սակայն նշված դրույթները չպետք է ներկայացվեն որպես բոլոր դեպքերի համար նույնական սահմանում, քանի որ տարբեր հոդվածներում կարգավորվում են տարբեր նպաստների տեսակներ և բացակայության տարբեր իրավական հետևանքներ: 26-րդ հոդվածի 3-րդ, 28-ի 4-րդ և 28-ի 5-րդ հոդվածներին վերաբերող փոփոխությունները		կիրառվող ժամկետների միասնականացումը, պարզեցնում է իրավական նորմերի կիրառումը և իրականացվող վարչարարությունը: Ելնելով ՀՀ-ում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը նպաստելու նպատակից՝ նախագիծը միտված է տրամադրվող նպաստներով աջակցելու Հայաստանի Հանրապետությունում երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացնող ընտանիքներին: Ուստի էական է ծնողի և երեխայի փաստացի գտնվելը ՀՀ-ում, իսկ պետական միջոցների հասցեական օգտագործումը պահանջում է, որ նպաստը վճարվի այն ժամանակահատվածի	

			պետք է գնահատել առանձին՝ յուրաքանչյուրի համար պարզելով՝ բացակայությունը ում է վերաբերում՝ ծնողին, երեխային, թե՛ երկուսին միասին, ի՞նչ ժամանակահատված է հաշվարկվում և ի՞նչ իրավական հետևանք է առաջանում: Երեք ամսվա անընդմեջ բացակայությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն Հայաստանի Հանրապետության տարածքից մշտապես հեռանալու մտադրությամբ, այլև բուժման, ուսման, աշխատանքի կամ ընտանիքի անդամի խնամքի և այլ օբյեկտիվ հանգամանքներով: Եթե այդ հանգամանքները հաշվի չեն առնվում, կարող է առաջանալ		համար, երբ այդ նպատակն իրականում իրագործվում է: Երեք ամիսն արդեն կայուն բացակայության ցուցանիշ է, այլ ոչ կարճատև ուղևորության: Նորմի խստացումը մեղմվում է նրանով, որ բացակայությունը որոշվում է ՀՀ սահմանային էլեկտրոնային համակարգի տվյալներով՝ առանց շահառուից լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու, վերանում է տարեկան մեկ անգամ բանկ ներկայանալու պահանջը: Արդյունքում կապահովվի նպաստ ստանալու իրավունքի պահպանման պայմանների նկատմամբ առավել օպերատիվ վերահսկողություն, նպաստների վճարման գործընթացի	

			նպաստի իրավունքի անհամաչափ սահմանափակման ռիսկ: Բացառությունների շրջանակը պետք է լինի հստակ, ստուգելի և կիրառելի՝ կանխելով ինչպես անհիմն մերժումները, այնպես էլ նպաստի իրավունքի չարաշահումը: **Առաջարկում ենք պահպանել առնվազն վեցամսյա ժամկետը: Եթե երեքամսյա ժամկետը համարվում է անհրաժեշտ, ապա օրենքում պետք է նախատեսել հարգելի բացակայության դեպքեր և դրանց հաստատման ընդհանուր չափանիշներ, օրինակ՝** ***«Սույն մասով սահմանված բացակայության***		արդյունավետություն և պետական բյուջեի միջոցների նպատակային ու հասցեական օգտագործում: «Հարգելի բացակայության» ինստիտուտի ներդրումը կպահանջի առանձին գնահատման և հավաստման ընթացակարգեր, ինչը կբարդացնի վարչարարությունը և կիակասի տվյալների ինքնաշխատ փոխանակման վրա հիմնված համակարգի պարզեցմանը, կառաջացնի լրացուցիչ ռիսկեր: Այդ պատճառով առաջարկը չի կարող ընդունվել:	

			ժամկետը չի կիրառվում, եթե Հայաստանի Հանրապետությունից բացակայությունը պայմանավորված է անձի կամ նրա ընտանիքի անդամի բուժման անհրաժեշտությամբ, ուսմամբ, ծառայողական գործուղմամբ կամ այլ հարգելի և փաստաթղթերով հիմնավորվող հանգամանքով: Հարգելի հանգամանքների ցանկը և դրանք հավաստող փաստաթղթերի ներկայացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:			
3	«Ա.Դ.ՍԱԽԱՐՈՎ Ի ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ		Սույն նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 8-րդ հոդվածի 3-րդ մասով առաջարկվում է		**Առաջարկն ընդունվել է ի գիտություն:** Ժամկետների	

	Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ 06.11.2026 18:54:44		փոփոխել «Պետական նպաստների մասին» օրենքի 26.2-րդ հոդվածի 8-րդ մասով և 28.4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ դիմելու ամսվան նախորդող ժամանակահատվածի համար նպաստ վճարելու ժամկետները՝ համապատասխանաբար 6 կամ 12 ամսից դարձնելով 3 ամիս: Փոփոխությունը կարող է սահմանափակել այն ժամանակահատվածը, որի համար անձը կարող է ստանալ նպաստ՝ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում: Սա պետք է տարբերակել նպաստի նշանակման համար դիմելու վերջնաժամկետից: Հետադարձ վճարման ժամանակահատվածի կրճատումն ինքնին չի		կրճատման և «Հարգելի բացակայության» հիմքով խնդրո առարկա նպաստների իրավունքի իրացման վերաբերյալ տե՛ս նախորդ առաջարկի վերաբերյալ մեկնաբանությունները: Հարկ է նշել նաև, որ նախագծով սահմանված են նաև անցումային դրույթներ, և մինչև 2028 թվականի հունվարի 1-ը ծնված ծնված երեխաների դեպքում այդ դրույթներով նախատեսված են դիմելու, իրավունքի իրացման ողջամիտ ժամկետներ:	

			դիմելու ուշացումը պայմանավորված է դիմողի կամքից անկախ հարգելի հանգամանքով, ապա դիմողին վճարվում է նաև սույն մասով սահմանված ժամանակահատվածից ավելի վաղ ժամանակահատվածի համար հաշվարկված նպաստը: Հարգելի հանգամանքների շրջանակը, դրանց հաստատման չափանիշները և դիմելու կարգը սահմանվում են օրենքով»:			